

ART-A
SAGS
1987


ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1684

Հուշարձանախումբը տեղադրված է Իջևան քաղաքից 18 կմ հյուսիս-արևելք, Աչաջուր գյուղից 3 կմ արևմուտք, Կովկասյան լեռների ստորին շղթային հորիզոնահայաց երկնասույզ Պայտաթափ լեռան բարձրանիստ հարթակում:

Ճարտարապետական խիզախ մտահղացման, հատակագծային յուրատիպ լուծման, ճոխ զարդաքանդակների կատարելության շնորհիվ այն դասվում է հայկական միջնադարյան մշակույթի բացառիկ ստեղծագործությունների շարքին: Դարավոր անտառի եզրափեշին ծվարած վանքը իր ավարտուն կերպարն է ստացել XVIII դ. 1-ին քառորդում: Այն Մահկանաբերդի Արծրունիների հոգևոր ու մշակութային առաջնակարգ կենտրոնն էր: Առանձնապես նշանակալից ու բեղմնավոր էր նրա գործունեությունը X — XIV դդ.: Զորեղ մեկենասներից ու պետական հովանավորությունից զրկված հաստատությունը հետագա դարերում լքվում ու ամայանում է:

ՀԻՆ ԵԿԵՂԵՑԻ — Համալիրի հյուսիս-արևելյան անկյունում տեղադրված հազարամյա այս հուշարձանը ներսից խաչաձև է, արտաքինից տեսքը՝ երկարավուն, քառանկյունի: Գմբեթակիր կամարներից ցած շարված է կոփածո կարմրավուն խոշոր քարերով, իսկ վերև, այդ թվում թմբուկը՝ սրբատաշ չեչաքարով, որը հետագա՝ XII դ. նորոգման հետևանք է: Եկեղեցու բեմաճակատը ծածկված է բուսական ու երկրաչափական քանդակներով՝ ներառնված շեղանկյունի զարդերի մեջ:




Մակարավանքի ընդհանուր տեսքը


ԳԼԽԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ — Համակառույցի հարավ-արևելյան թևում տեղակայված այս հուշարձանը միջնադարյան ճարտարապետության ու արվեստի անզուգական դրվագներից է: Այն կառուցել է Բազազ իշխանի որդի Վարդանը 1205 թ. Հովհաննեսի վանահայրության և Կայենո գավառի տեր Սադուն Արծրունու իշխանության ժամա-

ճակ: Այս եկեղեցին էապես համախմբում է ողջ հուշարձանախումբը, իր ծավալատարածական չափերով և ուրվանկարային համարձակ շեշտադրությամբ գերիշխում համալիրի վրա, ասես մրցակցում է հանդիպակած բարձրաբերձ լեռան հետ: Այն գմբեթավոր դահլիճ է, արտաքին տեսքով քառանկյունի ձգված, ներսից՝ խաչաձև հատակագծով՝ շարված սրբատաշ, բազմերանգ ֆելզիտով, ուր գերիշխում է բաց վարդագույն երանգը: Ներսի խաչթևերի անկյունների որմնահեծ հնգանիստ մույթերը միանալով հզոր կամարներով ստեղծում են քառակուսի բացվածք: Շրջօղակի վրա հանգչում է կլոր գմբեթը: Գլխավոր կիսաշրջան խորանի վրա փորված են կամարակապ զույգ որմնապուներով միմյանցից բաժանված գոգավոր 13 խորշեր, իսկ 4×1,5 չափերի բեմաճակատը ծածկված է հիրավի անկրկնելի հարտարությամբ հորինված նրբաքանդակներով, որոնք, իրավամբ, համարվում են հայկական արվեստի գլուխգործոցներից: Բեմաճակատը երիզող կիսագլանաձև շրջանակի մակերեսը պատված է հյուսկեն զարդերով: Շրջանակի ներսում սերտորեն միահյուսված եռաշարք բարձրաքանդակներ են: Ստորին ու վերին եզրերի զարդերը երիզված են կրկնաստիճան ութանկյուն 13 աստղիկներով, որոնց հարակցությամբ կազմվում է հորինվածքի միջին շարքը՝ ութանիստ եզրակողերով: Զարդաքանդակները հիմնականում բուսապտղային են: Ճոխ ու շքեղաշուք են կենդանամարմին-մարդագլուխ հուշկապարիկների, ձկների, առասպելական այլ մոտիվներով հիասքանչ զարդանախշերը, որոնք առանձնապես խորհրդանշում են կյանքի հարատևության իմաստը: Նրբակերտ աստղիկներից մեկի վրա այս բազմերանգ ստեղծագործության հեղինակի՝ Երիտասարդի, անվանագրված ինքնաքանդակն է:

Եկեղեցու արևմտյան մուտքի վերնամասը պսակված է գույնզգույն քարերի դրվագազարդերով: Բազմերանգ է նաև արտաքին հարդարանքը: Հատկապես ուշագրավ են սուրանկյուն որմնախորշերի կամարների, կլոր ու ուղղանկյուն լուսամուտների շրջանակները, արևի ժամացույցը, թռչնապատկերները, գմբեթը գոտկող տարաբանդակ գոտին և այլն:



Մակարավանքի տեսքը արևմուտքից



Գլխավոր եկեղեցու բեմի ճակատը


Գ Ա Վ Ի Թ — Հին և գլխավոր եկեղեցիներին կցված քառակուսի ընդարձակ դահլիճ է (13×13)։ Միակտուր, գլանաձև չորս սյուները միմյանց կապող հուսալի կամարների և նրանց հատման անկյուններում գոյացող առաստաղների կենտրոնում վեր է խոյանում ութանկյուն երդիկը։ Գեղարվեստական բարձր ճաշակով ու կատարելությամբ են հորինված առաստաղի բուսազարդերը, կամարների հիմքի ու սյուների խոյակների դրախտահավքերի բարձրաքանդակները։ Ու թեև գավթի պատերի մի մասը ծածկված են կից շինություններով, իսկ զառիթափից բարձրացող հյուսիսային պատը անմատչելի է դիտողին, սակայն ճարտարապետ-արվեստագետը մեծ հմտությամբ մշակել է այցելուի դեմ հառնող արևմտյան ճակատը՝ այն երեսպատելով տարերանգ վարդագույն քարերով, իսկ շքամուտքը՝ առասպելական կենդանիների բարձրաքանդակներով։ Ժամատունը կառուցվել է 1210-ական թթ.։

Ա Ս Տ Վ Ա Ծ Ա Ծ Ի Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ի — Գրավիչ, ինքնատիպ, վսեմ ու կատարյալ է այս փոքրածավալ հուշարձանը։ Այն կառուցել է վան-



Գլխավոր եկեղեցու հարավային պատուհանը

Գավթի շքամուտքը



Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգումից առաջ



Ս. Աստվածածին եկեղեցին վերանորոգումից հետո

քի առաջնորդ Հովհաննեսը 1198 թ. ի հիշատակ իր ծնողների ու եղբայրների: Եկեղեցին ներսից խաչաձև, դրսից՝ ութանիստ շինություն է, կառուցված համակ սրբատաշ վարդագույն և կարմրամոխրագույն խոշոր քարերով: Ճարտարապետական հորինվածքով ու արտաքին հարդարանքով հիշեցնում է Անիի Աբուղամրենց եկեղեցին (Xդ.), նրան զիջելով ծավալներով: Հուշարձանի արտաքին ստորին մասը շրջանաձև է, որն ավարտվում է կիսագլանաձև քիվով, որից վերև՝ ութանիստ է: Մեկ կլոր և երեք ուղղանկյուն լուսամուտները պսակված են նրբին շրջաքանդակներով: Չորս նիստերի անկյունաձև խորշերն ավարտվում են ճառագայթաձև զարդերով: Խորշերի վերին մասերն ու լուսամուտների պսակները շրջանցում է մի գոտի՝ համաչափորեն փոխանցվող առյուծների, թռչունների և վարդյակների բարձրաքանդակներով:

Հույժ կարևոր են նաև համալիրի տարածքի մյուս հուշարձանները (հյուրատուն, մատուռներ, կամարակապ դարպաս, աղբյուր, խաչքարաշատ գերեզմաններ և այլն) և վիմագիր արձանագրությունները, որոնք անփոխարինելի տվյալներ են պարունակում ինչպես վանքի կառուցման, նորոգումների, այնպես էլ միջնադարյան Հայաստանի տնտեսական, սոցիալական կյանքի, իրավատիրության վերաբերյալ:

1950 թ. սկսված պեղվել ու փլատակներից բացազատվել է ավերակված հուշարձանախումբը: Այս ընթացքում գտնվել են նաև 1205 թ. գլխավոր եկեղեցու շինարարության ավարտը վկայող խաչքարի բեկորները:

1974 — 1984 թթ. նորոգվել են բուսականության, երկրաշարժի հետևանքով ավերված Հին և Գլխավոր եկեղեցիների թմբուկները, արտաքին ու ներքին պատերը հատվածաբար, գավթի կրող սյուները, երդիկը, արևմտյան ճակատի զգալի մասը, հյուսիսային տեղաշարժված պատը՝ ամբողջությամբ: Հիմնովին, հուսալի կայունությամբ վերաշարվել են Աստվածածին եկեղեցու խիստ խարխլված պատերը: Ամբողջովին փոխվել են բոլոր հուշարձանների ելուզավոր ծածկասալերը:

ԳՄԴ 85.113(2Հ)1
Ս 168

ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ՍԱՂՈՒՄՅԱՆ
ՄԱԿԱՐԱՎԱՆՔ
Երևան «Հայաստան» 1987

САГУМЯН СУРЕН ТИГРАНОВИЧ
МАКАРАВАНК

(На армянском языке)
Ереван «Айастан» 1987 г.

Խմբագիր՝ **Ա. Ս. Ոսկանյան**
Նկարիչ՝ **Լ. Խ. Խաչատրյան**
Տեխն. խմբագիր՝ **Յ. Սարգսյան**
Վերատուգող սրբագրիչ՝ **Ս. Վ. Խաչատրյան**

Ս $\frac{4902020000}{701(01)86}$ պատվեր

© ՀՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՉԿ

ՎՖ 01149: Տպաքանակ՝ 10000, պատվեր՝ 5180: Գինը՝ 15 կոպ.: Ֆորմատ՝ 70×108 1/32: 0,52 պայմ. տպ. մամ., 0,54 հրատ. մամ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Իսահակյան 28
Издательство «Айастан» Ереван — 9, ул. Исаакяна 28

ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ
Երևան — 82, Ադմիրալ Իսակովի պող. 48:
ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ
Ереван — 82, пр. Адмирала Исакова, 48.